ընկերի վնասի համար, իսկամէ արենակցի կտոր հացը իւր որովայնի համար: Առուստուրի մէջ խարդաւանում ենք միմեանց, դրացութեան մէջ բամբասում ենք ընտանիքները, քաղաքական գործերի մէջ մրոտում, անդունդն ենք գլորում իրարու, ուսումնարանների մէջ իբրև հոգաբարձուներ կամ իբրև նորանց հետ դաշնակցած ուսուցիչներ կողոպտում ենք ուսումնարանները, եկեղեցոյ մէջ ծախու ենք հանում նորա արքութիւնները: Բայց ի վերայ այսր ամենայնի մենք տրտմում, հառաչում նաև զայրանում ենք քրդերի և տաճիկների դէմ, երբ հարստահարութեան միտրեէ լուր ենք ստանում մեր հեռաւոր եղբայրներից: Չպէտք է կարծել, որ մեր հոգեմաշ տրտմութիւնը ու հառաչանքը առ երևոյթս է. ոչ, մեր զգացմունքները ի սրտէ են, մենք ցաւում ենք, որ ինչու մեր ազգակիցներին քրդերը և թիւրքերն են հարստահարում և ոչ մենք:

Թիչ խօսքով ասել, մեր ժողովրդեան ամեն մի դասակարգի անդամը, լինի նա վարդապետ, քահանայ, վաճառական, արհեստաւոր, վարժապետ, աշակերտ, իւրաքանչիւրը նոցանից իւր որոշ նպատակն ունի և իւրեանց նպատակը իւրեանք են միայն: Վարդապետը կամ քահանան ձեռնադրվում է կտոր հացի համար միայն. ուսուցիչը ուսուցանում է, աշակերտը ուսանում է կտոր հացի համար միայն: Ոչ ոք չը կայ, որ նուիրուէ իւրեան